



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԴՊՐԵՎԱՆՔԻ 76-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՍԱՆՈՒՑ
ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ ԲԱՅԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ
ՊՍԱԿՈՒԵՑԱՄ

Ուրբաթ, 13 Հոկտեմբերի երեկոյեան, սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, Էնսիսօ, հանդիսաւորապէս նշուեցաւ «Սրբոց երիցս երանեալ հարցն մերոց, հոգեշունչ թարգմանչաց» նախատօնակի արարողութիւնը, նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, եւ մասնակցութեամբ հոգեւորականաց եւ սարկաւազաց դասերուն: Նախատօնակի ակարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը հոգեշունչ քարոզ մը ուղղեց ներկաներուն, յիշելով՝ թէ «Թարգմանիչ Հայրերը երկրաւոր փառքը արհամարհեցին, Ս. Գրիգոր Լուսաւորչի գահը հաստատեցին, Մովսէսի նման աստուածային նշանագրերը Հայաստան աշխարհ բերին եւ Ս. Հոգիով լեցուած՝ աստուածգիտութեան ծածկուած խորհուրդը մարդոց յայտնեցին»: Առաջնորդ Սրբազանը նշեց նաեւ, որ այսօրուան պէս Դպրեվանքի մէջ ալ նոյն այս արարողութիւնը կը կատարուի, որովհետեւ «Դպրեվանքին ներշնչում տուող, Դպրեվանքը վերանորոգող, մնայուն ոգի ջամբող ախոյեաններն են թարգմանիչ հայրերը» եզրակացուց Սրբազան Հայրը:

Արարողութեան յաջորդեց Դպրեվանքի Սանուց Միութեան կազմակերպած ճաշկերոյթ տարեկան ձեռնարկը, եկեղեցւոյս «Աւետիսեան» սրահէն ներս: Աւելի քան 450 անձեր ներկայ էին ճաշկերոյթին, նախկին Դպրեվանքեցիներ եւ Դպրեվանքի առաքելութեան հաւատացող բարերար-բարեկամներ: Երեկոյթին հիւրընկալներն էին՝ Դպրեվանքի նախկին սաներէն Տէր եւ Տիկ. Չոհրապ եւ Լիզա Մանուկեաններ, որոնք 30 հազար տոլարի նուիրատուութեամբ քաջալերած էին ձեռնարկը:

Թարգմանչաց նուիրուած «Որք Չարդարեցին» շարականի երգեցողութեամբ հոգեւորականաց թափօրը, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, մուտք գործեց սրահ: Ապա ներկայ դպրեվանքեցիները միաբերան երգեցին «Սիրտ ի սիրտ» Դպրեվանուց քայլերգը, որմէ ետք կատարուեցաւ Սեղանի օրհնութեան աղօթքը:

Բարի գալստեան խօսք արտասանեցին օրուան հանդիսավարներ՝ Գերպ. Տ. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեան, որմէ ետք օրուան պատգամաբեր՝ Արժ. Տ. Խորէն Ա. Զինյ. Հայեշեան, իր խօսքին մէջ վեր առաւ Դպրեվանքի երեկի եւ այսօրուան առաքելութիւնը եւ անոր բերած նպաստը Ազգի ու Հայրենիքի ծառայութեան մէջ:

Օրհնութեան խօսքը փոխանցեց Բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը, յիշեցնելով ներկաներուն, թէ անցնող տարուան նոյն այս ձեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը Ս. Աթոռոյս Գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին: Առաջնորդ Սրբազանը, խօսելով Դպրեվանքի առաքելութեան մասին, ըսաւ՝ որ Դպրեվանքը բոլոր դպրեվանքեցիները թրծեց կրօնի հուրով եւ ազգին սիրով, որովհետեւ այս երկու նուիրական սրբութիւններուն ծառայելը

իւրաքանչիւր դպրեվանեցիի կոչումը եղած է: Խօսքի աւարտին, Սրբազանը գնահատեց Դպրեվանքի Սանուց Միութեան կազմակերպիչ յանձնախումբը, Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը, Ազգային Վարչութիւնը եւ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը, եւ բոլոր բարերարները, որոնք իրենց նիւթաբարոյական աջակցութեամբ սատար կը հանդիսանան Դպրեվանքի վերելքին, հոգեւորական ու ղեկավար մարդու պատրաստութեան անոր առաքելութեան:

Պաշտօնական առաջին այս բաժնէն ետք բեմ հրաւիրուեցաւ նախկին Դպրեվանեցի եւ յեղափոխական երգերու մեկնաբան՝ Գառնիկ Սարգիսեան, որ երեկոն ծաղկեցուց եւ ներկաները ներշնչեց յեղափոխական եւ ազգային երգերու կատարումով, մասնակցութեամբ՝ «Քնար» նուագախումբին:

Ձեռնարկէն խանդավառ, ազնիւ բարերարներու եւ դպրեվանասեր ժողովուրդի ազնիւ զաւակներու քաղցր նուիրատուութեամբ հաւաքուած գումարը հասաւ աւելի քան 85 հազար տոլարի:

Ուշ գիշերին, ներկաները լիցքաւորուած եւ գոհունակ սրտով՝ վերադարձան իրենց տուները:

BANQUET CELEBRATING THE 76TH ANNIVERSARY OF THE ANTELIAS SEMINARY WAS A GREAT SUCCESS

On Friday, October 13, on the eve of the Feast of the Holy Translators, evening services were conducted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with the participation of Prelacy clergy members and deacons, at Holy Martyrs Church in Encino.

Following church services, the annual Seminary banquet took place at "Avedissian" Hall with over 450 Seminary alumni and supporters in attendance. The host of the banquet was Seminary alumnus Mr. and Mrs. Zohrab and Liza Manougian, who expressed their support with a 30,000 dollar donation.

With the singing of a hymn dedicated to the Holy Translators, the clergy members, led by the Prelate, entered the hall in a procession where they collectively sang the Seminary anthem.

The official program began with welcoming remarks by emcees Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian. The evening's keynote speaker, Archpriest Fr. Khoren Habeshian, then delivered his remarks in which he emphasized the mission of the Seminary and its invaluable contribution to the Armenian people.

In his remarks, the Prelate reminded the guests that one year ago, this same banquet took place under the auspices and presided by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia. He stated that as a result of the piety and nationalistic ideals that the Seminary instills in each student, serving God and the Armenian people becomes the mission of each Seminarian. The Prelate concluded by expressing his appreciation to the Seminary Alumni Committee, the Prelacy Ladies Auxiliary Guild, Executive Council, the Catholicosate's Central Executive Council representative, the A.R.F. Central Committee representative, and to all the benefactors whose continuous moral and financial support contribute to the fulfillment of the Seminary's mission to educate our future spiritual leaders.

Following the official program, former Seminarian Karnig Sarkissian and his "Knar" band entertained the guests with revolutionary and nationalistic songs. Throughout the evening, benefactors and supporters of the Seminary made donations that totaled over 85,000 dollars.